ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«15» հոկտեմբերի 2018 թվականի № 120-Ն

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 51-րդ հոդվածի, 54-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հիմք ընդունելով հանքավայրի շահագործման նախագծի 2018 թվականի սեպտեմբերի 12-ի ՀՀ բնապահպանության նախարարության՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության» թիվ ԲՓ-75 և 2018 թվականի մայիսի 11-ի ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության՝ «Արտադրական վտանգավոր օբյեկտի նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության» թիվ-1134 փորձաքննությունների դրական եզրակացությունները, հաշվի առնելով «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԻԼԿ-ի 2018թ. սեպտեմբերի 24-ի թիվ Ֆ-280/18 գրությունը, «ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊ ընկերության 2018թ. ապրիլի 03-ի թիվ 22 գրությունը և Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «ՄԼ ՄԱՅՆԻՆԳ»ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) 42.4 տարի ժամկետով տրամադրել օգտակար հանածոյի արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման թիվ ՇԱԹ-29/590 թույլտվությունը՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արտենիի պեռլիտային ավազների հանքավայրի հարավային տեղամասի պաշարների՝ 1.X=4469748 Y=8396941, 2.X=4470040 Y=8396968, 3.X=4470081 Y=8397111, 4.X=4470145 Y=8397152, 5.X=4470119 Y=8397186, 6.X=4470025 Y=8397112, 7.X=4469800 Y=8397189, 8.X=4469735 Y=8397183 (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով եզրագծված տարածքներում արդյունահանում կատարելու համար, հատկացնել 953,1 հազ. մ^3 պեռլիտային ավազի մարվող պաշար և լեռնահատկացման թիվ Լ-590 լեռնահատկացման ակտը՝ 1.X=4469748 Y=8396941 H=1499.0 h=-4, 2.X=4470040 Y=8396968 H=1552.0 h=-7, 3.X=4470081 Y=8397111 H=1508.0 h=-8, 4.X=4470145 Y=8397152 H=1501.0 h=-1, 5.X=4470119

Y=8397186 H=1497.0 h=0, 6.X=4470128 Y=8397218 H=1490.0 h=0, 7.X=4470158 Y=8397229 H=1487.0 h=0, 8.X=4470152 Y=8397244 H=1482.0 h=0, 9.X=4470124 Y=8397233 H=1482.0 h=0, 10.X=4470025 Y=8397112 H=1512.0 h=-12, 11.X=4469800 Y=8397189 H=1454.0 h=-4, 12.X=4469831 Y=8397260 H=1450.0 h=0, 13.X=4469800 Y=8397264 H=1455.0 h=0, 14.X=4469690 Y=8397223 H=1450.0 h=0, 15.X=4469715 Y=8397174 H=1460.0 h=0, 16.X=4469735 Y=8397183 H=1461.5 h=0, 17.X=4469748 Y=8396941 H=1499.0 h=-4, (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով եզրագծված 7.7 հա տարածքով:

2. Հանքի տարեկան արտադրողականությունը սահմանել 20.0 հազ. մ^3 պեռլիտային ավազ:

3.Կնքել օգտակար հանածոյի արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման նպատակով ընդերքօգտագործման թիվ Պ-590 պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր):

4. Ընդերքի գործակալության պետին՝

1) ծանուցել ընկերությանը՝ ոչ ուշ քան 5 աշխատանքային օրվա ընթացքում վճարել ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման պետական տուրքը.

2) հրավիրել ընկերությանը 10-օրյա ժամկետում վավերացնելու (ստորագրելու և կնքելու) Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արտենիի պեռլիտային ավազների հանքավայրի հարավային տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման ընդերքօգտագործման թիվ Պ-590 պայմանագիրը.

3) ընկերության կողմից պայմանագիրը վավերացվելուց (ստորագրելուց և կնքելուց) հետո, 10 օրվա ընթացքում ընկերությանը տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման իրավունքը հավաստող փաստաթղթերի փաթեթը.

4) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագիրն իր կողմից չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փաթեթը չստանալու դեպքում, արդյունահանման իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած.

5) ապահովել համապատասխան գրառումների կատարումը օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

5.«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

6.Սույն հրամանն ուժ մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

7. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Վարդան Գևորգյանին:

10/15/2018

X

VERIFIED OCSP 15-Oct-18 10:29:29 GMT+4

Signed by: BAGHRAMYAN GAREGIN 3207770118 ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ